



ՄԵՍՐՈՊ ԱՔԵՂԱ ԱՆԹԱՔՅԱՆ

ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍՍՄԱՐՏԸ

Թեև մոխիր ու ավերակ շատ են դիզվել հողիս վրա,
Թեև անթիվ հրոսակներ ասպատակել են երկիրն իմ,
Եվ էջերին մեր պատմության ժողովրդիս արյունը կա,
Ընդվզումի կայծը սակայն հրդեհել է մեր էլ հողին...:

Մենք էլ հանուն նշմարտության մեր բազկի մեջ զենք ենք գրկել,
Մահառել ենք բռնության դեմ, դուրս ենք եկել անեղ մարտի,
Եվ վարարուն մեր արյունով հայրենի հողն ենք պաշտպանել,
Թեկուզ բնկել ենք կիսամեռ մով լանջերին մեր լեռներին...:

Թիվը մեր՝ Բիշ, հողը՝ սակավ, կովի ելանք գերության դեմ,
Չսասանեց մեր վեհ հողին Սասանյան կեռ բրի առաջ,
Պայխարի հողը դռն պարզած գնացինք մենք մահվան բեղդեմ,
Որ այնուհետ հայ երկնի տակ էլ չլսվեր լաց ու հառաչ:

Տղմուտ զեռի գարշ ավերին փռված հազար կմախքներ կան,
Որ պերճախոս վիաներն են սպերշանիկ մեր հին կյանքի,
Կուրծքը նրանց պատառվել է հանուն անգին ազատության,
Որ բարիքներ անեին միշտ հողի վրա Հայոց երկրի...:

Դա մեր արդար իրավունքն էր... ո՛վ կիշխեր այն խել մեզնից,
Չէ՛ որ մենք էլ սիրա ունեինք, մենք էլ էինք կյանքը սիրում...
Էլ ինչո՞ւ բույլ տալ ոսոխին, որ մեզ բերեր մահ ու կսկիծ,
Քանի որ ուժ կար աննահանջ մեր առնական մկաններում:

Հեռասմարտն այն փառանեղ, որ բորբոքվեց Ավարայրում,
Որդան կամիր մեր արյունի քմբոստացումն էր սրբազան,
Որ գրանցվեց ոսկե տառով մեր պատմության մեծ մատյանում,
Որպես խրոխտ հերոսացում բեղդեմ դավի, ստեղծության...:

...Եվ աննահանջ այդ պայխարի երկարածիզ ոսկեշղթան
Պարզեց մեզ ազատ երկիր, դարբնեց կյանքը մեր երջանիկ,
Տվեց մեզ բախի ու ներշնչում ընթանալու դեպ ապագան,
Որը այնպե՛ս լուսաշող է, այնքա՛ն շփել ու գեղեցիկ...:

